Իսկ թէ ո՞րպէս ժողովեն զոսկին՝ ծանի՛ր։ Կէս կէս թզաչափ եղէգս շարելով առ միմեանս առնեն իբր զգոտի և կապեն զմիջովք իւրեանց, և սկսանին որոնել ի մէջ աւազոյ զոսկին, և զորս ընդ աչօք անկանին՝ ժողովեն և դնեն ի միջոց եղէգսն։

Բայց գոն և այլ բազմութիւնք ոսկւոց ի յաւազին, որք ոչ անկանին ի ներքոյ տեսութեան աչաց աւազանման որ կոչի՝ սու ալթընը, որք ոչ ճանաչեն և ոչ կարեն ժողովել, և ոչ գիտեն զտելն հրով. զի պարտէին զայն ամենայն աւազսն ի մէջ տաշտի զօրէն արայճիից լուանալ, և այնու կարէին գտանել զոսկին։ Բայց տխմար և աւաղ անմտութեան նոցա։

Սակայն Թովմաճանն եւս բազումս աշխատեցաւ առնուլ զայն աւազն ոսկւոյ, և փոխանակ նորա զկնիքն, այսինքն զսիկկէ թագաւորական հանել, այլ ոմանք հաճեցան և ոմանք ոչ։ Եւ այսպէս մինչեւ ցայժմ ոչ ունին զսիկկէ, այլ կշռով գործածեն։

Եւ այն ժողովեալ ոսկին հարիւրական տրեմ հալեն մի մի սիւպիւրէ շինեն և բերեն թագուհւոյն. և թագուհին առեալ դնէ ի ներքս ի պալատի գանձատանն, և զոմանսն տայ գանձապետին իւրոյ, և նա կտրատէ զնոյն սիւպիւրէն ոսկին և 88 տրամ կշռով ոսկին դնէ ի մէջ մի մի կոտոր աստառի կամ կտաւի կապէ ասղանեօք, և կնքէ. և այս 8 տրամ կապոց ոսկւոյն վաքիէ կոչեն։ Եւ յորժամ հրաման գայ ի թագաւորէն տալ ռոճիկս աբանց այսչափ վաքիէ, յայնժամ գանձապետն տայ զայնքան վաքիէ, եւն...։

Շաբաթուն յերկուս աւուրսն վաճառ լինի. և ամենայն որ յաղքատաց գնան ի վաճառն, և զշաբաթօրեայ պիտոյսն պարտին գնել անտի, և ոմանք եւս փոփոխելով առնեն. զոր օրինակ, զկորեկն տայ և զգարի առնու. զցորեանն տայ և զսիսեռն առնու. զբակլան տայ և զոսպն առնու, զհաւն տայ և զմիս առնու եւն. զի ի մէջ քաղաքի կրպակս ոչ ունին ի վաճառել զիրս. և զհացի սերմն ամենայն որ ի տան ունի. և ի տան իւրում ամենայն որ առնէ զհացն, զի հացավաճառ փուռ ոչ գոյ ի քաղաքի։ Եւ զցորենի հացն ոչ ուտեն. բայց ի սեղանս մեծամեծաց բաց ի յիւրեանց հացէն, ցորենի հաց եւս գոյ, սակայն զծուխ դարբնոյ յատուկ մուծեալ են որ ոչ կարէ ուտիլ հանգստօրէն։

Եւ դարձեալ, չորս ժամաւ հեռի ի Կեոնտէրէ մեծ լիճ մի գոյ, որ է մայրն և սկիզբն Եգիպտացւոց Նեղոս – Նիլ մուպարեկ – գետոյն, և գոն բազում կղզիք ի լճի անդ, որոց ոմանք ճգնաւորաց վանք են և ոմանք կուսանաց վանք, և նաւակքն որով գնան ել և մուտս առնեն՝ եղեգնեայ են։

Այլեւս ի լիճս յայս գոն բազում գոմէշանման չորքոտանի մեծ կենդանիք, բայց զեղջիւր ոչ ունին. սերնդազործեն ի ցամաքի՝ ելեալ ի ջրոյ ի վերայ հողոյ, և յայնժամ ի թաքստի կացեալ որսորդքն հրացանիւ հարկանեն զնա ի բազում տեղիս, և ընդ անկանելն գնան և մորթեն զնոսա, և հանեն զմորթն, որ չորս մատնաչափ թանձրութեամբ է, յորմէ կազմեն զվահանն։ Քանզի յետ չորացուցանելոյ զնա մի մատնաչափ թանձրութեամբ մնայ, յայնժամ ոչ սուրն հատանէ զնա, և ոչ հրացանի արճիճն անցանէ ընդ այն։

Եւ ի յերկիրս այս հապէշու բազում և բազմատեսակ կենդանիք գոն, և մանաւանդ կանն է փիղն, արջն, առիւծն. իսկ կապիկք հազարաւոր ի միասին շրջին, սոքա եւս տեսակ տեսակ են, և յայս կապկաց գոն եւս իշաչափ և երկայն ձեռով որ ի վերայ մեծ ծառոց շրջին, որ և տեսեալ Թովմաճան և վկայէ։ Սակայն այս ամենայն կենդանիք եթէ ոչ երկնչէին ի հրացանից՝ ոչ ոք կարէր զճանապարհորդութիւնս առնել։ Այլեւս ի բազում գետս սոցին բազում կոկորդիլոս գտանին, որպէս պատահեցաւ եւս Թովմաճանին, որ ի մահուանէ ազատեցաւ։

Այլ արդ, այսքան ծանօթութիւն հապէշ թագաւորութեանն Կեոնտէր քաղաքի բաւականասցի, և եկեսցուք ի կարգս պատմութեան գանձապետ Թովմաճանին որ ի 1765 թիւն Փրկչին։

(Շարունակելի)